



ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԿԵՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի կ' Պոլիս, ամեն ամսոյ 1ին և 15ին:
Հասցէ՝ կ' Պոլիս, Ղալաթիա Նորադարձակեան Կան-
ջեռքէ կը ծախուի հատը 40 փոսայ:

Կանոնադրագին
Պոլիս, Կարեկան
Կանոնները,
Օտար երկրքը:

մէկ մէծիտ:
մէկ քանորդ ոսկի:
վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 15 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հասած են թէ փորձառութիւնը օգուտ չունի տղաքներու: Բոն^ոնք, նաեւ հայոց երեսփոխաններու: Մէկ տարիէն աւելի է Ազգային ժողովը, կամ աւելի ճիշդը ժողովի մի մասը կը տառապի մեծամասնութիւնը մը ճարեւու մտաւորանութեամբ, հոգ չէ թէ այդ մեծամասնութիւնն Օրինական ըլլայ, Իսկական ըլլայ, Սահմանադրական ըլլայ: Թող մեծամասնութիւն ըլլայ այդ կը բաւէ: Եւ ստիպեալ ժողովի նիստերուն յաճախող երեսփոխաններն հետզհետէ այնպէս հազուադիւրս կը դառնան, ինչպէս սեւ կարապը: Այս չարիքին իբր գարման յուսահատ փոքրամասնութիւնը «Մեղայ» կը դռնէ փոքրինան կանոնադրին, եւ կ'երթայ անոր հովանիին ներքեւ որոնել ժողովի գոյութեան ապաւէնը: Միշտ՝ անարգեալ վէմին յաւիտենական պատմութիւնը:

Հոկտեմբեր 27ին Ստեփան փաշա Ասլանեան եւ «պարագայք իւր» փարեցան Ռուսինեան կանոնադրին, իբր փրկութեան օճին, և ի ներկայութեան ասան երէւ երեսփոխաններու յայտարարել տուին թէ Ռուսինեան կանոնադրին «մեղմովն գործադրելի է՝ զոնոր տնօրինութիւնն»:

Այդ կանոնադրի մէջ կան երկու տրամադրութիւններ որոցմէ փոքրամասնութիւնը կը յուսայ ժողովին համար գործունէութեան պայծառ դարադրուի մը: Քսան եւ չորս ձայներու միաբանութեամբ վըճիռ տալ և ակտուազուրի ընել այն երեսփոխաններ որ առանց օրինական պատճառի երեք նիստ յաջորդաբար բացակայ գտնուած են, ահա այն քաններն որոնց հարուածներու ներքեւ մեծամասնութիւնը ժողովատրահէն ներս պիտի մղուի:

Այս այս երկու տրամադրութիւններ գործադրելի են — գէթ ներկայ պարագայներու մէջ:

Տարիէն աւելի է Ազգ. ժողովը գործնական կերպով ընդունեց թէ՛ իր գումարումներն օրինաւոր համարուելու համար պէտք է որ նստին ներկայ ըլլայ պաշտօնի վրայ գտնուող երեսփոխաններու մեծամասնութիւնը: Տարիէն աւելի է ժողովը համակերպեցաւ այս որոշումին որ կը մօտենայ Սահմանադրական տրամադրութեան, արդ յանկարծ հիմա մի քանի երեսփոխաններ կուղեն վերադառնալ նախկին դրութեան: Փոքրամասնութիւնն ի՞նչ պէտք կ'ունայ վերահաստատել դրութիւն մը որ ջնջած է մեծամասնութիւնը: Կը մոռնայ այդ փոքրամասնութիւնը թէ ի՞նչ պատճառներ հարկադրեցին ժողովը զոհել իր մեծամասնամեայ դրութիւնն: Եթէ փոքրամասնութիւնը զայս չյիշէր գէթ Ստեփան փաշա պէտք է լաւ յիշողութիւն ու-

նենայ: Միթէ 88 էն ի վեր փոխուեցա՞ն ժամանակները:

Շատ անհաճոյ դէպքեր կրնան տեղի ունենալ եթէ վերստին փոփոխութեան ենթարկուի մեծամասնութեան օրէնքը: Լաւագոյն է ատեն մը եւս զուրկ մնալ մեծամասնութենէ քան վտանգներու հանդէպ գտնուիլ:

Իսկ յաջորդաբար երեք նիստերու բացակայ գտնուող երեսփոխաններն հրաժարացնելու որոշումը կրնայ մեզ սպասնակից ապագայ մը գուշակել տալ: Ատեն մը Ռուսինեան կանոնադրի ոյժով մերթ Ընդ մերթ մի քանի անդամներ հրաժարեալ կը հաշուուէին. ո՛ր է է անսպասելիութիւն առաջ չէր գար, հրաժարեալներու տեղ նորեր կ'ընարուէին և ամէն ինչ կը վերջանար, քայց յորմէ հետէ այդ կ'անոնագիր անգործադրելի է չա՛տ ստուարացած է բացակայ գտնուող երեսփոխաններու թիւը, և այժմ ունինք երեսունէն աւելի երեսփոխաններ որք եթէ յաջորդ նստին ներկայ չգտնուին պիտի հաշուուին հրաժարեալ: Աւելցնելով այդ թիւն արդէն հրաժարեալ, պակասեալ կամ Պոլսէն բացակայ երեսփոխաններու վրայ կ'ունենանք թափուր աթոռներու ստուար թիւ մը: Եթէ ի նկատի առնենք այն ծանր դէպքերն, որոնցմէ անցաւ ժողովը, չենք կարծեր թէ խնայողն գործ մը բլլայ յանկարծ այսքան նուազեցնել Ազգ. ժողովի անդամներու թիւը: — Անդամատեալ ժողով մը կրնայ անդամալուծուիլ:

Եւ սակայն պէտք է մեծամասնութիւն ունենալու միջոց մը գտնել. այդ միջոց գտնելու համար լաւ չէ՞ արդեօք մտածել թէ՛ կա՞ն պատճառներ, որոցմէ ահաբեկեալ, երեսփոխանները կ'երկնջին խորհրդարանէն ներս մտնել: Այս հարցումն ըրինք բացակայ գտնուող շատ մը երեսփոխաններու սրբամէքն ալ գրեթէ միեւնոյն պատասխանն ունին: Չանձրացած են երկարածիք ճառեր մտիկ ընելի. կը փափաքին իրենց ժամանակն օգտակար ընել ազգին, բայց ժամանակին քիչ է. կարծու լուրջ փնտրանութեամբ գործ տեսնել այս է իրենց փափագը. բայց այս փափագի իրագործումը իբր իւթօրի մը պիտի նկատեն, որչափ ատեն որ մի քանի երեսփոխաններ շարունակեն իրենց ձանձրանալի, անվերջանալի ատենաբանութիւնները, շարունակեն իբր իրենց սարսկները նկատել Ազգ. ժողովի մեծամասնութիւնը: Իսկ իրենք կուգան և պիտի գան միայն նիստերուն ուր կարելի է քուէարկութեամբ գործ տեսնել քան ճառով:

Այս համազումն ընդհանրացած է, և

առանց վարանելու կ'ըսենք թէ Ազգ. ժողովի մեծամասնութիւնը մեղադրելի չէ եթէ իր ներկայութիւնը կը պահէ միայն այն նիստերուն ուր ապահով է թէ պիտի կըրնայ օգտակար ըլլալ. իսկ ատենաբանելու արարելը կը թողու, անոնց որք երբեք չեն հոգնիր խօսելէ, «սահման քաջաց... լիզու իւրեանց»:

Եւ արդարեւ ի՞նչ հրապոյր ունի երեսփոխաններու համար հրաւիրագիր մը որուն մէջ ամիսներով օրակարգին գլուխն է ներքին կանոնադրի խնդիրն: Չտեսա՞ն փորձով թէ ի՞նչ տաղակալի վիճարանութիւններու դուռ մը բացուեցաւ ներքին կանոնադրի աթիւ: Ամիսներու մէջ ի՞նչ ընել հնարաւոր եղաւ: Ի՞նչու մէկ նստի մէջ ջնջել Ռուսինեան կանոնադրի մի քանի յօդուածներ, որք գուցէ կը հակո՞նակին Սահմանադրութեան օգուոյն և մնացեալ կանոնները գործադրելի նկատել:

Եղած է արդեօք 1885էն ի վեր նիստ մը ո՛ւր ո՛ր է խնդրի աթիւ մի քանի երեսփոխաններ չգարնեն կաթողիկոսական ճաթած թմբուկին: Չորս տարի է ամէն նստի կը լուսնի մի և նոյն եղբէր եղած խօսքերն. գերմարդկային համբերութիւն պէտք է, տարին տոմսերիւ աւելս մտիկ ընելու համար միևնոյն բաւերով, միևնոյն չեղեկերով, միևնոյն յաւակնութեամբ արտասանուած ճառերը:

Բայց աւելի մեծ դժբաղդութիւն մը կայ. մի քանի երեսփոխաններ համոզուած են թէ ուղղամիտ երեւալու միակ միջոցը անքաղաքաւարութիւնն է, եւ երբ բարեկրթութեան պակասութիւն ունին կը կարծեն թէ անկեղծ են: Ի՞նչ ընեն միւս երեսփոխաններն որք տարրեր գաղափար ունին անկեղծութեան եւ ուղղամտութեան վրայ:

Մի քանի դէպքեր առաջ բերենք: Վերջի նիստերէն միոյն մէջ երեսփոխան մը տալիթ քաղելով կրթական խնդրէն կը պարտաւէր բոլոր ազգային դպրոցներն եւ անոնց խնամակալներն. և երեսփոխաններ որք առանց վարձապետ ըլլալու, առանց շահու մը անկախութեան իրենց ժամանակը կը նուիրեն ազգային կրթութեան գործին, և կ'աշխատին սրտով ու եռանդով, կը նախատուէին, առանց խնայողութեան, յականէ անուանէ:

Վերջի նստին, փոքրամասնութեան ներկայացուցիչներէն մին, կը թշնամանէր բոլոր իր բացակայ պաշտօնակիցները, վերագրելով անոնց բացակայութիւնը գաղտնի դիտումներու, ժողովն անգործութեան դատապարտելու մեղաւարտ գաղափարին: Այդ երեսփոխանները չէ՞ին մեծ մասամբ որ անցեալ տարի ժողովը փրկեցին, և իրենց խոհականութեանն ու ազգասիրու-

թեանն անժխտելի ապացոյցները տուին : Ու երբ, այդ բացակայներու բարեկամ երեսփոխանները կը պաշտպանեն իրենց պաշտօնակիցներն «աղաւէս» կը կոչուին փոքրամասնութեան տրիրունէն որ ամօթի մուրը կը ժայթքեցնէ բացակայներուն : Դարձեալ վերջի նստին . երեսփոխան մը կեղծ ու պատիր սուրբ զայրոյթով կը դռնէր թէ Ուսումնական Խորհուրդը պատժեցներէ կազմուած է . և այդ պատժէ լատը կ'արտասանէր արհամարհական այնպիսի շեշտով, որ պերճախօս կը բարբառէր թէ ի՞նչ անհուն տարբերութիւն կայ իր, և իր նման «ընկերական բարձր գիւրք ունեցողներու և հասարակ «պատմաճի» կոչուած վաճառականներու դասին միջեւ : Մեր Քաղաքական Ժողովը, մեր Զիւանդանոցի հոգաբարձութիւնը, մեր Կեդրոնական վարժարանի խնամակալութիւնը, մեր ամէն ընկերութիւններն, մեր ամէն բարեգործական ձեռնարկներն այդ «պատմաճի»ներու հօր աջակցութիւնը կը վստայէին : Պէ՞տք է արդեօք վստակ զանոնք այդ ամէն հիմնարկութիւններ տարակիցով թէ «պատմաճի» են, բան չեն գիտեր, միայն «պատմա չափել գիտեն» ինչպէս կ'ըսէր այդ երեսփոխան արհամարհական ծաղրով :

Այս առթիւ կրնանք ըսել թէ՛ հարկ անհրաժեշտ չէ՝ որ կրթական մարմին մը վարժապետներ ունենայ իր մէջ—թէ՛ պէտեւ արդէն Ուսումնական Խորհուրդն թէ իր մէջ վարժապետ ունի, և թէ՛ կրթական գործերէ լաւ հասկցող ուրիշ անձնաւորութիւններ :—

Վարժապետներն ընդհանրապէս մէկ կամ երկու ճիւղի մէջ դաստիարակելու փորձառութիւն ունին, աւելի ոչինչ : Իսկ Ուսումնական Խորհուրդ մը, որ ընդհանուր հոկոյն է գալորցներու, պէտք է որ դաստիարակելու յատկութիւնն տարբեր յատկութիւններ ունենայ, և այդ յատկութիւններն ուսուցիչներու մեծաշնորհ չէ :

Ահաւասիկ Կեդրոնական վարժարանի խնամակալութիւնը որ իր մէջ չունի մի հատ ուսուցիչ, արուեստով «կրթական խնդրէ հասկցող», այլ միթէ խնամակալութիւնը լաւագոյն գործ մը պիտի ընէր թէ՛ կազմուած ըլլար վարժապետներէ, կամ թէ՛ իր մէջ ունենար մի քանի վարժապետներ : Ինչ որ ստոյգ այս է թէ խնամակալութիւնը եթէ կազմուած ըլլար վարժապետներով, շատոնց Կեդրոնական վարժարանը քար ու քանդ եղած կ'ըլլար : Երկու երեք վարժապետ երբ իրարու քով գտն ո՛չ իրարու մէջ կը համաձայնին, ո՛չ ալ ո՛ր և է խումբի հետ համախառնութեամբ գործելու կարող են :

Ուսումնական Խորհուրդի առթիւ էր որ վերջի նստին երեսփոխան մը բազկատարած գոչեց թէ՛ «—Աստուած լուսաւորէ Ներսէս Պատրիարքի հոգին որ ուսումնական Խորհուրդը վարժապետներով լեցուց» — բայց ի՞նչ մեծ գործ տեսաւ այդ Ուսումնական Խորհուրդն, որով անմահացուց իր անունն, եւ կարելի ըլլայ զնա օրինակ ցոյց տալ Թիւրքեանի Ուսումնական Խորհուրդին : Հարցարան մը չինեց, այդ գիտենք : Գիտենք նաեւ թէ այդ Ուսումնական Խորհուրդի ոչ-վարժապետ մի անդամ, Մկրտիչ Էֆ. Նորիկեան հրաժարեցաւ . երբ Ներսէս Պատրիարք ուզեց պատճառն իմանալ, Նորիկեան էֆէնդի յայտարարեց թէ՛ կարելի չէ գործ տեսնել այնպիսի մարդոց հետ որք քարկերթութեան նախնական սկզբունքներն անդամ չգիտեն : Ներսէս Պատրիարք արամբեալ կ'ըսէր Ուսումնական Խորհուրդի այդ յաւակնայեղ վարժապետին .

—Աստուած գրեզ ուրիշ խմորէ ստեղծած է որ այսպէս կը նախատես ամէն մարդ :— Անցողաբար և ցաւելով կ'ըսենք թէ՛ մէկ երկու անձինք կը ներկայանան իր վարժապետութեան երեսփոխանները, իրենցմէ դուրս վարժապետ չկայ . և որովհետեւ իրենք համակրելի չեն, իրենց դէմ ցոյց տրուած հակակրթութիւնը կուզեն վերադարձնել բոլոր վարժապետներուն . բայց ոչ ոք այսպէս կը մտածէ : Այլ և իրենք, այլ և ուրիշ ազնիւ վարժապետներ :

Նախնական կրթութեան կատարեալ պակասութիւն չէ՞ Ժողովի մէջ Պատրիարքի ներկայութեան այնպէս եղանակաւ մը դրուատել Ներսէս Պատրիարքը որ այդ դրուատիւքները արդի Պատրիարքի համար կ'ծու ախարկութիւններ համարուին :

Ո՛չ միայն բարեկրթութեան, այլ եւ ողջամտութեան կատարեալ բացակայութիւնն էր, մի քանի երեսփոխաններու ընթացքը կաթ . Յանձնաժողովի առթիւ : Վերջիններ նստի մէջ կ'որոշուի կաթ . Յանձնաժողովի երեք շաբաթ վերջին պայմանաժամ տալ, իր տեղեկագիրը բերելու համար : Այդ որոշում սպառնալիք էր, եւ ոչ թէ՛ վճռական պատգամ . գործադրելի ըլլալու համար երեսփոխաններու մեծամասնութեան ներկայութիւնը անհրաժեշտ էր :

Իրենց այս սպառնալիքով Ժողովականները նպատակ ունէին գործելու մղել կաթ . Յանձնաժողովն . եւ արդարեւ հասան իրենց նպատակին . բայց Յանձնաժողովը չկրցաւ աւարտել իր աշխատութիւնները և Պատրիարքը հոկոմ . 27 ին իւլնոյրեց Ժողովականներէն որ մի քանի նիստ ևս բնէ կաթ . Յանձնաժողովը : Ժողովականները այսպիսի առաջարկ մը ընակա-

նարար յօժարութեամբ պարտաւոր էին ընդունիլ, ի յարգանս իրենց սրբազան նախագահին: Եւ սակայն գտնուեցան երեսփոխաններ որք առաջարկեցին մերժել Պատրիարքի առաջարկն, առանց մտածելու թէ մերժելով Պատրիարքի առաջարկը կարող չէին լուծել և կոթ: Յանձնաժողովը քանի որ մեծամասնութիւն չկար: Պատրիարքի առաջարկին մերժողական պատասխան տրուեցաւ մի քանի երեսփոխաններու կողմէ, բայց վերջապէս Յանձնաժողովը չը լուծուեցաւ:

Չենք գիտեր թէ Սահմանադրութեան Հաստատութենէն ի վեր եղած է Պատրիարք մը որ Ազգ. ժողովի հետ վարուի այնքան յարգանքով, այնքան յիշատակութեամբ որով կը վարուի արդի Տ. Խորէն Պատրիարք. և ատոր փոխարէն քիչ մը մարդավար ըլլալ կարելի չէ:

* * *

Օրինակները բազմապատկելու հարկ չենք տեսներ. Հաստատ Համոզումնիս այն է թէ՛ մեծամասնութիւն գոյացնելու միակ միջոցն ուրիշ ոչ այլ ինչ է բայց եթէ նկատողութեան առնուլ այն խընդիրները որ առաջ բերինք: Կրնա՞նք յուսալ թէ փոքրամասնութիւնը ինքնարեւարար պիտի փոխէ իր ընթացքը: Չենք կարծեր: Այսպէս եկած են, այսպէս պիտի երթան. զայս կ'ուսուցանեն մեզ հոգեբանական օրէնքները:

Այլ մեծամասնութիւնը կ'արդարանայ խոյս առնով ժողովէն: Բնա՛ւ: Մեծամասնութիւնը տէրն է ժողովին. բաւական է որ մի քիչ կորով ցոյց տայ, այն ատեն կարելի կ'ըլլայ ամէն ինչ կարգի բերել:

Փափագելի է որ մեծամասնութիւն կազմող երեսփոխաններն որք իրենց համերաշխութիւնը ցոյց տուին ամէն խընդիրներու մէջ, մասնաւոր գումարում մը ընեն յառաջիկայ նիստէն առաջ դարման մը խորհին, և միաբան նստին գալով թոյլ շտան որ ժողովն արկածներու զոհ երթայ, և ո՛չ ալ անդործութեան դատապարտուի:

Ո՛չ միայն խղճի պարտականութիւն է այս, այլ և պատուոյ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՍՈՒՐՋԱՆԴԱԿ

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Պոնտոսի ճամբով մինչեւ հիմա ցաւատանջ պանդուխտներ ու աղէկիզիկ նա մականեր կուգային մեզ. և ահա նոյն այդ ճամբով, Պ. Յարութիւն Գայանան կը զրկէ մեզ բանաստեղծութեանց հատոր մը, Աստուծոյ Բարեկէսը:

Ըսենք նախ սակայն թէ այդ քերթուածներուն մէջ ոչինչ կայ աղէկիզիկ ու ցաւատանջ: Պ. Գայանան կեանքին վրայ յոռետես գաղափարներ չունի. ուրեմն մի՛ սպասէք իր բանաստեղծութեանց հաւաքածոյին մէջ գտնել իր շուրջն ողորդ, տառապող և արտասուող մարդկութեան կրքերը, ցաւերն ու արցունքներն: Ըսել է կ'երգէ՞ մեզ լայն ծիծաղն որ կեանքի գոհունակութեան հրճուալի արտայայտութիւնը կը գնէ այտերուն վրայ, գինին որ գաւաթին մէջ կը փրփրայ և արխանն որ երակաց մէջ կը հոսէ հրահոսան, վարդագեղ երեսներու վրայ լիարեւոյն համրոյրին շառաչիւնը կամ առողջ ու կենսանորոգ սէրը՝ բնութեան տուող ու կորովի անսարմաներուն հանդէպ: — Ո՛չ, դարձեալ ոչ:

Պ. Գայանան վեհերոս սկսնակ մըն է, որ կը սիրէ հետեւիլ արդէն հորդուած ուղիներու, առանց քայլ մը չեղելու յաջ կամ յահեակ: Իր տաղերը ֆոգիտիւս (fugitive) կոչուած բանաստեղծութիւններ են մեծ մասամբ, որոց նիւթը կը կազմեն հայ բանաստեղծութեան յաւիտենական ստիակն, որը Սրբուհին կամ կայր Վարդահին, մայրիկ մէկ կամ ձմրան «սպիտակ ստանը», ի մահ այսինչին կամ ի ծնունդ այսինչին, և այլն և այլն: Ասոնց վրայ աւելցուցէք բնութեան քանի մը տեսարաններ. քանի մը տաղեր Յիսուսի վրայ, քանի մը Թարգմանութիւններ անգլիացի բանաստեղծներէ, և կ'ունենաք Աստուծոյ Բարեկէսը, պատկերազարդ, (170) երես, մաքուր թղթի վրայ ընտիր տպագրութիւն նշան Պէրպլէրեանի:

Այս հապճեալ քննադատութիւն ծայրայեղ է արդեօք: Մանրամասնօրէն քննենք ուրեմն գիրքը:

Գրքին մեծ մասը կը կազմեն մանկական, կամ աւելի ճիշդ՝ ըսելով մանկանց համար գրուած բանաստեղծութիւններ, ինչպէս Փիրէն որ «իւր անկողնոյն մէջ քնքուշիկ — կը քննանայ հոգիի հոգիի»: Որքն առ Սոխակ, Աջազուրկ Վիրգինէ, Հէգ այրին, Եղուարդին առաջին քայլէ:

ըը, Վարդանոյշ, Արշամ, Պապուհ Արմէն, Թանկադին նուէրը, Իմ Թուշնիկին մահը, Գեղջուկ Մաննիկ, Հուսթ և Մեղուն, Աղջիկին առ Թուշնիկ, և դեռ ուրիշ մի քանիներն: Մանկանց համար բանաստեղծութիւն գրելը շատ դժուրին բան չէ, որովհետեւ քերթուածը պէտք է ունենայ միանգամայն պարզութիւն ու դիւրամթեքութիւն և մանկան մտքին վրայ հզօրապէս ազդելու կարողութիւն: Պ. Գալսեան ի նկատ չառնուր այս կէտերն, և իր «պզտիկներն», երբ պատմութիւն մը կ'ընեն մեզ, աւելի կը թուին գոյ ըրած ըլլալ զայն իրենց վարժապետէն՝ քան իրենց սրտէն ու իրենց մտքէն խօսիլ: Բայց սաստի, այդ տաղերուն մէջ չ'ս գտնել մանկանց հոգւոյն վերլուծութիւնն, անոնց աշխոյժ զարմացումներն ու ինքնաբոլս իսնդապատանքները, պարզ ու բնական վիճակի մէջ, անզարդ ու անսեթեւեթ՝ ընդհակառակն, այդ «պզտիկները» ինծի քեզի դաս կրնան տալ, կենսաքին լիակատար հասկացողութիւնն ունին, սոխակին կ'ըսեն՝ «Ազու ձայնովդ ա'հ սոխակ սիտի մ'եղար դու հիգիս, — Գեղգեղներուդ ի հոսան հալեցուցիր սառ հոգիս», և կամ

Երթ ընդ այգուն, մերթ գիշերայն ես շարունակ
կ'երթամ այցել այն վայրերուն անփառուեակ,
Բայց երբ իմ հօր ու մօր տնկած ծաղիկներէն
իրենց ձոնել չը կարենամ թող ինձ ներեն:

Մահուան խորշակ կարծեց փռէջ պարափելս ալ,
Օր մ'ալ անշուշտ խամրեցունել պարտի դիս ալ:

Մի' մոռնաք թէ այս վերջին տողերն ըսող սրբունին հի'նդ տարեկան է:

Բնութեան տեսարաններ նկարագրող քերթուածներ ուրիշ շարք մը կը յօրինեն. (այս շարքերը ես կը կազմեմ, որովհետեւ գրքին մէջ խառնիխառն դրուած են քերթուածները, առանց մասնաւոր բաժանումի, այնպէս որ սիրահարական տաղէ մը յետոյ կը գանես Յիսուսի ծննդեան վրայ օրհներգ մը, և այլն. նիւթոյ ցանկ ալ կը պակսի դժբաղդարարս) Մայիսը, Գարունը, Լուսինն և ամպերը Ծովը, և ուրիշներ, նկարագրուած են լայն տողերու մէջ, բայց ոչ լայն վրձինով: Պ. Գալսեան նոր բան մը չգտնել բնութեան մէջ՝ որ իրմէ առաջ արդէն արտայայտուած չըլլայ: Միշտ նոյն քառամասնի տմականներն են որք ա'լ նոր պատկեր մը չեն ծնուցանել մտքիդ մէջ, նոյն բնութեան բնութեան այլազան տեսարանաց, և մանաւանդ նոյն մշտնջենական տեսարաններն որոցմով յագեցած է հայ բանաստեղծութիւնը:

Աս բեկեալ սգին, Իմ հեծը, Ամանոր,
Իմ բողբոջը, Առ որ անկ է, Առաջին Ար-

տասուք և այլն, հեղինակին այն բանաստեղծութիւններն են յորս կը խօսի իր զգացմանց վրայ մասնաւորապէս: Ի զուր տակայն կը փնտռեմ անդ սրտի պատառուածքներն՝ արիւնայի, հոգւոյն այն սատուիկ և թրթռուն զգայնութիւնն որ բանաստեղծին կուտայ կարողութիւնն արտայայտելու իւր ամէն դառնութիւններն ու կակիճները: Պ. Գալսեանի շրթունքէն հազիւ կը խուսափին տրտունջի քանի մը խօսքեր, և ահա իր խաղաղ ու անգործ մարդու ուղղախոհութիւնը կուգայ կոտորել անոնց ոյժը: Նոյն իսկ երբ այդպէս չ'ըլլար, կ'զգաս թէ այդ բանաստեղծութիւնք սրտէն բղխած չեն մէկ ցայտով, գրգռութեան և մոլորութեան վայրկեաններու մէջ, այլ կամաց կամաց, հեղիկ հանդարտիկ, բառերը փնտռելով և վանկերն համրելով:

Կը մոռնայի թէ Առաջին Մահաճի մէկ մասն ալ կը կազմեն կրօնական բանաստեղծութիւններ, Յիսուսի վրայ, Բանաստեղծ երկրին վրայ և Աստուածաշունչի ուրիշ նիւթերու վրայ: Այդ կրօնական ոգին արդէն ծայրէ ի ծայր սիւսուած է բոլոր գրքին մէջ, և հին ու նոր կտակարանի շատ մը ծանօթ բառեր ամենուրեք կը հանդիպին աչքերուդ: Այդ բանաստեղծութիւններ իրենց արժէքն ունին անշուշտ, այլ Առաջին Մահաճի մէջ չէ իրենց տեղն, հազա թերեւս Պայպըլ Հաուզի երգարաններուն մէջ:

Պ. Գալսեանի գերազանց առաւելութիւնը կը կայանայ իր յանդերուն մէջ, որք հարուստ են, գերահարուստ, Աղեքսանդր Փանոսեանի գրչին արժանի լինելու չափ: Առաջին տարբերութեամբն մէջէն, պատահմամբ, կ'ընդօրինակեմ սա յանգերը. Թոռուն իմ, — դեռ չ'ունիմ. — հըպատակ, — նըպատակ. — գաղտուկ, — տաղաուկ. — քս վանդակ, — բովանդակ. — վայրի, — այրի. — վանդակի, — քանդակի. — հարապատ, — յար ապատ, — գամ քան ըզգամ, — անըզգամ. — մանչերէն, — տանջեր են: Այսպէս կրնամ լեցնել ամբողջ էջեր, և դժուարութիւնս մեծ չ'ըլլար, կը բաւէ գրքին մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը բոլոր յանգերն ընդօրինակել: Իրաւ է սակայն որ այդ յանգերուն մէջ Փանոսեանի յանգերուն անակնկալը չիկայ միշտ, բայց այդ ճոխութիւնն այնչափ ուշադրութիւնդ կը դրաւ որ տողին ծայրն հասնելուդ պէս աչերդ անգիտակցաբար յաջորդ տողին վերջը կ'երթան տեսնելու համար թէ ինչ յանգ դրուած է հոն, առանց շատ ուշ դնելու անկից առաջ գրտնուող բառերուն: — Լեզուն սահուն է, ճիգ չեն ըներ բմբունելու համար, և բաւական կոկիկ աշխարհաբար մը կը տիրէ

մինչեւ վերջը: Դիտողութիւն մը ունիմ
ընելիք միայն այն շեշտերուն վրայ որք ը
ով կազմուած են: Հայ քերթութեան մէջ
ըր կրնայ վանի կազմել, բայց ոչ երբեք
շեշտ ընդունիլ: Ըստ այսմ, Պ. Գալսեա-
նի ճարտար տողերուն մէջ շատ խղճուկ
երեւոյթ մը կ'առնուն սա տեսակ տողեր:

Առանց թռչնոյ ի՞նչ է բոյնը,

Առանց լուսոյ ի՞նչ է գոյնը,

և կամ՝

Արշալուսին տեսա՞ր արծաթ շողերը,
Յոր ծիծաղին լերանց կանաչ կողերը:

Պ. Գալսեան հայ բանաստեղծներուն
ամէնէն բաղդաւորն է: Դեռ իր երկը չը
հրատարակած, վեց հարիւրի չափ բաժա-
նորդ գտած է Փոքր-Ասիոյ գահազան քա-
ղաքացի մէջ: Աւստիկ իրողութիւն մը որ,
ինչ պայմաններու տակ ալ կատարուած
ըլլայ, զարմանալի երեւոյթ մըն է հայ
գրականագիտութեան տարեգրութեանց մէջ:
Մեր միւս բանաստեղծներուն համար մա-
նուանդ այդ զարմանքը շատ սաստիկ
պիտի ըլլայ: Հարցուցե՛ք իրենց թէ մինչեւ
հիմա ո՞րչափ վաճառուած է իրենց տա-
ղերուն հաւաքածոյներէն:

Եզրակացնելով՝ Պ. Գալսեան յաջող
տաղաչափ մըն է, բայց բնաւ երբեք բա-
նաստեղծ: Իր պատկերներն, իր զգայ-
նութիւններն հին երգերու տպաւորու-
թիւնը կը թողուն մեր վրայ: Նորութիւ-
նը կը պակսի իր քով, բացարձակապէս:
Իր քերթուածները գրուած ըլլալու հա-
մար գրուած են, և ոչ թէ սրտին ան-
գիմաղթիկ և անզուտ կրքերուն և յոյ-
գիրուն գոհացում տալու համար: Գրքին
մէջ միութիւն չկայ, որոշ յատակագիծ
մը, որուն հետեւելով հեղինակն իր սե-
փական և ինքնատիպ արտայայտութիւն-
ներն ի յայտ բերէ:

Մենք այդպէս չենք ըմբռներ սակայն
բանաստեղծութիւնը. տողերն իրարու ե-
տեւէ շարելէն աւելի գերադոյն բան մըն
է այն: Դժուարին է գիտական առածի
մը շափ ճշգրիտ սահման մը դնել բանաս-
տեղծութեան, և սակայն, ամէնէն դիւ-
րահատկանալի ձեւ մը ընտրելով, բաւ է
ըսել որ բաժնաւորը պէտք է ունենայ
իր ինքնութիւնն: Ամէնէն մեծ բանաս-
տեղծներն իրենց արցունքները խառնած
են իրենց տաղերուն այլք իրենց խան-
գաղտտանքն տրիչներ իրենց երազներն
ու իրենց ցնոջներն, մերթ իրենց տա-
նապաշտներն և մերթ ալ իրենց արթնն:
Բանաստեղծը մարդու և բնութեան վրայ

իր ըմբռնումները կը յայտնէ, իր զգայու-
թեան համաձայն, և այդու շահեկան կը
լինի մեզ համար: Իր միտքը ցոլացիկ հա-
յելի մըն է, ուր կ'անդրադառնան ամէն
տեսարաններն և ամէն նկարներն. իր
սիրտն եւողեան անհուն տաւիլ մը ու-
րուն վրայ կուգան թրթռալ ամէն հա-
ռաչներն ու ամէն ծիծաղներն, և խնդի
և հեծկուռքն, որոց արձագանգներն ուղ-
ղակի կ'աղբեն իր հոգւոյն: Եւ բանաս-
եղծը մեզ կը ներկայացնէ այդ տեսարան-
ներն այնպէս ինչպէս ինք ըմբռնած է,
ու մեզ կը հաղորդէ այդ թառանջներն
ու այդ խնդուքներն այնպէս ինչպէս
ներգործած են իր հոգւոյն: Երբ նոր բա-
նաստեղծի մը երկը կը բանանք, կը փնտ-
ռենք թէ իր միտքն ի՞նչ նոր ծալք գտած
է մեզ ներկայացնելու համար քանիցս
նկարագրեալ պատկերներ, կամ իր սիրտն
ի՞նչ ալք՝ ինքնուրոյն կերպիւ ըմբռնելու
համար իր վշտերն ու այլոց ալ վշտերն:
Երբ այս բանը կը պակսի, հոն ալ գործ
չունի բանաստեղծութիւնն, և երկը կը
գաւթի մեզ համար շահեկան ըլլալէ:

Քանի որ բանաստեղծութեան վրայ կը
խօսինք, առիթէն օգուտ կը քաղեմ իմ
կարծիքս յայտնելու համար դիտողութեան
մը վրայ դր Մարտի մէջ Պ. Աղեքսանդր
Քալանթար ըրած է Պ. Յովհաննէս Յով-
հաննիսեանի Բանաստեղծութեան այն հատ-
ուածին վրայ յորում ուսումնայ երիտա-
սարդ քերթողը կը նկարագրէ գեանդեր-
եայ ժայռի մը վիշտն: Քննադատը կը գո-
չէ զարմանօք. «Ժայռի մը վիշտը. կարե-
լի՞ բան է այս. քիչ է մնացեր որ բանաս-
տեղծը բանական ոգի մը տայ այդ ան-
չունչ զանգուածին եւ խօսիլ տայ նման:

Պ. Քալանթարի զարմացման վրայ կը
զարմանամ: Արդեօք ի՞նչպէս կ'ըմբռնէ
ինք բանաստեղծութիւնը: Ինչո՞ւ բանաս-
տեղծին կը զլանայ ամէն բանի մէջ հոգի
մը, կեանք մը գտնելու զգայնութիւնը:
Ո՞վ կ'ըսէ թէ բանաստեղծն արձակագրին
ըմբռնումները պիտի ունենայ կեանքին
վրայ. չենք ընդունիր որ մտացածին
պատկերներ յօրինէ նա բնութեան դուրս,
այլ եսանդեամբ կը ծափահարենք երբ
բնութեան տեսանքի նկարներուն վրայ իր

երազներն ու ցնորքներն յայտնէ մեզ: Պէտք է բմբուսեղծին ջիւղերն յարաշարժ ու յարահոլով գրգռման մը մէջ են, և ոչ թէ տողերն իրարու ետեւէ կը շարէ նա՝ հանգանակութեանց ցուցակ մը հրատարակելու պէս: Աբմոզ յօդուածի մը նիւթն է այս սկզբունքն, այլ փոխանակ բնագոյնական տեսութեանց մէջ թափառելու, հարկ կը համարինք օրինակներով հաստատել մեր բնածն, եւ կը շատանանք աստ ինքնելով փրանաական արդի բանաստեղծութեան երկու գերազանց ներկայացուցիչներուն, Ժան Ռիշէնի և Մուսիս Ռոլլինայի երկուքերթուածներն, որոց առաջինը կը խօսի կրակարանին մէջ այրող փայտին եւ երկրորդն ազառածներուն վրայ:

Աւատիկ Ժան Ռիշէնի բանաստեղծութիւնն, Հէճէճէճէճ փայլուն վերնագրով.

«Բոցանշոյլ վառարանին մէջ կրակը կը չէ ու կը պայթի, և վաղնջուց փայտը կը հեծեծէ մենակերպ ձայնով:

«Կ'ըսէ թէ ծնած էր որպէսզի ապրէր ջինջ օդին մէջ, հողէն սնանէր և երկնից կապոյտը ծծէր, յամբարար աճելով՝ ամէն տարի աւելի բարձր, միշտ աւելի բարձր միջր իր կանաչապսակ գլուխն, ապրիլը խնկէր իր ծաղկանց ողկոյցներով, ապաւէնն ըլլար բոյներուն և գեղատոյլ թըռչուններուն, հողմին մէջ արձկէր հազար երգեր բերկրապատար, և հետզհետէ հագնէր իր հրաշալւան շրմագետներն, իր գարնային մեկնոցը՝ նրբին ընծիւղներով ծածկուած, իր աշնային ծիրանին, և իր կնքումն ձմեռայնոյ: Կ'ըսէ թէ մարդն ազա՛հ, դաժան և անդուլթ է որ ստապարի հարուածով և դժնեայ կեղեքումներով սպաննած է ծառը: Կի ծառն ալ կենդանի էակ մըն է: Կ'ըսէ թէ ինք որչափ բարի եղած է յաճախ մարդուն համար, երբ մեր նորածնը տարիանաց և անհամար համբոյրներուն տուած է մթամած ննջասենեակն իր ստուերին, թէ ցերեկին ըզմեզ կը ծածկէր իր թաթմաւէտ կամարներուն տակ և սոխականց գեղգեղներովն զմեզ կ'որոյրէր ի գիշերին: Եւ թէ մենք, ապերախութեամբ, մոռնալով մեր սէրը, մեր պատանեկութիւնը, անապոյտն կերպով կը կարենք անպաշտպան հսկայն:

«Ու վառարանին մէջ փայտը կը հեծեծէ ու կը գալարի:

«Ո՛վ փայտ, իմաստուն չես դու և յանիրաւի կը գանգատիս: Մեր ձեռներն ոճրագործ չեն երբ գրեզ կը կտրեն: Դուն միւսնոյն տեղը կը մքըլիր, անշարժ ու չղթաշտկալ, արմատներուդ կապանքին ենթարկուած և անբաժանելի կերպով միացած հողին: Դուն որ կ'ուզես ազատ ըլլալ և կը յայտարարես թէ ծառն ալ կենդանի է, դուն հոն անկուած կը մնայիր արձանի հանգուստով, կեղեւիդ մէջ գերի և կաշկանդեալ, և թռչնոյն նայելով միայն դազափար մը կ'ունենայիր թռիչքին վրայ: Մենք գրեզ ազատեցինք հողէն ուր դամուած էիր, և ահա կը տատանիս ջուրց վրայ, տեսնելով արմաքներ և նաւորդներ, անոնց տուններն ու անոնց երկվարներն: Ո՛վ այլազան երկինքներ, ո՛վ նորանոր հորիզոններ: Ի՛նչ անծանօթ բարիքներ պիտի ճանչնաս դուն վերջապէս: Արկածներու ի՛նչ տարօրէն շունչ կը թափանցէ ի ներքս ի քեզ: Բայց այս ամէնը բան մը չէ, որովհետեւ կը սողաս տակաւին: Թող ճեղքեն ու վառե՛ն գրեզ, յայնժամ կ'առնուս թռիչդ: Թող վայրագ հուրը լալիլիզէ նեարդներդ, այն ատեն ահա ազատ ես դուն, հիմակ դուն կ'ապրիս, ազատ ես դուն հուսկ ուրեմն: Ծաղկներուդ գարնանաբոյր անուշահոտութիւններէն վեր, գեղատոյլ թըռչուններուդ երգերէն ալ վեր, հառաչանքներէդ ալ վեր, խօսքերէս ալ վեր, ամպերուն ու անսահման անձրաւտին մէջ կը թռչիս դուն: Դէպ այն գոլորշիներն վարդակարմիր, ուր երեկոյնան արեւը կը չիջանի որպէս կրակն ի խորս խնկամանին, դէպ այն երկնակամարն կապուտագեզ որ քու ծխեղէն հոգիդ կը ծծէ սարկատենչիկ, դէպ այն հեռաւորութիւնն խորհրդաւոր և վեհապանծ՝ ուր վաղը պիտի գայ արթննալ արշալոյսն կենսացնուդ և ուր այս գիշեր պիտի շողջողան աստեղային պայծառութիւնք, բարձրացի՛ր, բարձրացի՛ր յաւէտ, թաւալէ՛ պարոյրներդ, բարձրացի՛ր, մարի՛ր, փախի՛ր, անյայտ եղիր: Ահա վերջին ծուէնդ կը տատանի միմաւորիկ, կարի յոյժ նրբացած, ու կը հալի, ու կը լուծուի, ու կը մեռնի: Էութիւնդ կը կորսնցնես: Հիմակ ա՛լ աչք մը չկրնար ճանչնալ գրեզ, և դուն, որ հառաչանօք կը յիշէիր արձակ երկինքն և ջինջ օդն, ո՛վ փայտ վաղնջուց, երկնակապոյտին մէկ պատահո՛ւն ես հիմակ:»

Եւ ահա դարձեալ Ռոլլինայի քերթուածը.

Ա Պ Ա Ռ Ա Ժ Բ

Ա Ր Վ Ի Դ Գ Ո Ր Հ Ի Խ Յ Օ

Յորեններէն , գարիններէն , հաճարներէն ա'լ անդին ,
Հո'ն ուր դալար , ծաւ , կակուղ խոտ , փողի , հող ո'չ գլուանի ,
Գետի մը մօտ ոյր ջինջ ալիք փրփուրներով յար պատին ,
Կը խորհին ժայռք՝ մ'պէսներուն , արծիւներուն ընտանի :

Հազարաւոր ամեր ապրող մանկական տիք մշտափայլ ,
Անշարժութիւն , խոր ապշութիւն , ուրուատեսիլ երեւոյթ ,
Մեռեալ սրտից , անկեալ հոգւոց ցուրտ լըռութիւն անայլայլ ,
Ունին այդ ժայռք առէն ինչ որ չըփոթ , սարսափ տան հոգւոյդ :

Գետն որ կ'ոռնայ ե վէտվեալի այդ ժայռերու տակ
Մի հայելի կ'ըլլայ անոնց , հեղեղընթաց , խօլ , յիմար ,
Եւ որ՝ ձըմեռն՝ երբոր յորդէ իւր ծակէն դուրս՝ դայ չիտակ
Փրփուրներով մորակիւզ գայնս , ապառիներ տալ անհամար :

Գորշ ու մըթին ճեղքի մը մէջ կամ խոռոչի մ'ի վերայ ,
Այն ամսուն մէջ յորում գեփիւռն անոյշ բուրմամբք ողորուն
Առնու տանի խունկն այն ծաղկին որ իւր շնչովն երերայ ,
Իժն հո'ն կուգայ ցոյց տալ զիւր գլուխ տէգի պէս սուր՝ այլ սողուն :

Մառախուղին մէջ , մըտատանջ , կարծես սպասել կը թըւին
Խորհրդաւոր հրրաժեշտի ժամու մ'հնչմանն որ երթան ...
Տեսնելու գէմք չունի'ն միթէ - այլ աչք չունին բընաւին ,
Ո'չ ալ ականջ , սակայն լըսե'լ ալ կը թըւին ի մըթան :

Եւ , հէգ հսկայք վշտաշարժար այն ահու լի վայրերուն ,
Սարսափ ապգեն չըջակայից , դողան լեռ , սար , ձոր , բըլուր ,
Քանգի ողբերն ե ճիգք բըւոց որ անոնց հիւրքն են թագուն ,
Այն ձայնն է որ անոնց համար կը հեծեծէ դառնալուր :

Թէ՛ արեգակն այրէ զլրենք , թէ՛ զարնուին կայծակն ,
Գուռ փոթորկաց փայլատակմանց , որոտմանց տակ աննըկուն ,
Այն դըժընդակ ապառաժներ տրտում տըխուր կը հսկեն
Սոսկալիթխար հըրէշներու խումբի մը պէս , անդ կանգուն :

Մին , որոյ ծայրն երկայնածէս դանակի պէս ցըցուի փր
Եւ որ մաշի բորբանքու , սո'նկերու , թաց խոտոց տակ ,
Եւ ոյր մէն մի ճեղքն երեւի լինել մի խոց կարկվեր ,
Դէտ ի մի կողմ հակի դիմօք ահեղապէս խոնջ վատաակ :

Մինչ ուրիշ մ'ալ որ մի ճաղի սե կափարչին է նըման
Խորհրդ աշուք երկինքն ի վեր կարծես բացուած , բարձրացած ,
Չոր դեմնաքարչ տերեւներուն վերայ վայրկեան տու փայրկեան
Հնչեցունէ յաւերժական թորումն քարին արտատուաց :

Եւ ամէնքն ալ , տարբեր ձեւով , բորբա , գոտա , ծուռ ու մեռ ,
Այն մենութիւնն ե'ւս ստաւել կացուցանեն ամայի ,
Եւ իրենց ցուրտ տեսքովն որ տայ խոր խորսփում ու սարսուռ
Պատմեն անհուն վիշտքն ու ձանձրոյթն յոր տառապին յաշխարհի :

(Սոյն քերթուածին գերազանցապէս գեղեցիկ թարգմանութիւնը կը պարտիմ Աղեքսանդր Էֆ. Փանոսեանի: Երբ Ռիչ-բէնի քերթուածը թարգմանեցի, զգացի որ արձակ թարգմանութիւնը շատ կը նըսեմանար բնագրին պերճութեան քով, դիմեցի Եղէր «Տեղերու հեղինակին» Ռոլ-լինայի Ապառաժ Երուին համար, եւ հետեւեալ առաւօտուն ի ձեռին ունէի արդէն ոտանաւոր թարգմանութիւնը: Ծնորհակալութենէս աւելի, սքանչացումս կը յայտնեմ այն յաջողութեան համար որով կրցած է ի հայ յեղուլ այդ քերթուածն, առանց բան մը կորսնցնելու բնագրին դժուարին և թափանցանց դարձուածքներէն:)

Ի՞նչ պիտի ըսէ այժմ Պ. Քալանթար. վայտն որ կը խօսի իր չարչարանաց վըրայ, և ապառաժն որ «դէպի մի կողմ հակի դիմօք ահեղապէս խոնջ վաստակ» եւ «Իրենց ցուրտ տեսքովն որ տայ խոր խրոնովում ու սարսուռ. — Պատմեն անհուն վիշաքն ու ձանձրոյթն յոր տառապին յաշխարհի»: Եւ սակայն չեմ կարծեր որ Ռիչբէն ու Ռոլլինա, զորս գրադատք ունեցէր հիւկոյէն բարձր կը դասեն, պէտք ունենան դաս առնելու Պ. Քալանթարէն:

Լ. ԲԱՆԱԼԵԱՆ

ՓՈԹՈՐԻԿԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Ահու դողի մէջ, պատուհանը, դուռը, քարափին վրայ ցրուած, չուարած կ'ըստեսին, մինչդեռ փոթորիկը կ'ալէկոծէր Վոսփորն իր բոլոր ուժգնութեամբ:

Գիշերուան մէկ ու կէսն ըլլալու էր, ամառ գիշերուան մը, յանկարծաւոր մըրիկի մը սեւութեան մէջ կորսուած, զոր անընդհատ իրարու յաջորդող կայծակին գիծերն ի վուր կը փեւեկատէին. երկնքին մէջ ինչպէս ամէն ուրեք պայքար մը կար լուսին ու մթութեան մէջ, յիսերիմ ու մահացու կռիւ մը. և խաւարը կը յաղթէր հոս ալ, գրաւելով ամէն կողմ. բարդելով իր խաւերուն մին միւսին վրայ և տարօրինակ գիշերուան մը պէս, սեւ վարադոյրով մը ծածկելով բոլոր հորիզոնն ու ծովուն մըրկայոյզ ջուրերը:

Խաւարին մէջ որոշ ու յայտնի, փոթորկին ահեղագոյ մոնչիւնը միայն կու-

գար, վայրենի ճիչի, աղաղակի մը պէս, վայրկեան մը դադրելով, իբրեւ թէ զայն արձակող մեծածաւալ թռքերը չունչ առնել ուզէին, և յետոյ աւելի եւս սաստիկ գոռալով:

Եւ այս աղմուկին ու շփոթութեան մէջ տնեցիք ահարեկ վեր վար կը վազէին, չգիտնալով ըրածնին ու թողածնին, ի վուր ջանալով որոշել ծովուն վրայ Աշէհէլը, փոքրիկ մակոյկն որուն մէջ իրենց մէ մին այս պահուս կը գտնուէր, ահարկու դարձած այդ կոհակներուն խաղալիկ, դուցէ՛ անհետ կորսուած անոնց մէջ: Կուլային, կ'աղօթէին ու կը յուսային:

— Սահակը հեռ է, կ'ըսէր հայրն, յիսունի մօտ ծերացած մարդ մը, ջանալով սիրտ տալ իր կնոջը:

— Վախո՛ բան չկայ կ'աւելցնէր դուրսի մը, անոնք մօտերն եղբւրք մը ելած են. Աշէհէլը վախնալու մակոյկ չէ:

Ու փոթորիկը կը մոնչէր ի գերեւ հանելով այս յուսադրական խօսքերը, ծովուն վրայ ձեւացող ալեաց կատարները կը թռցնէր դաշոյնի հարուածով կտրելով զանոնք ու ծովեզերքին վրայ կեցող մարդիկն ետ կը հրէր խառութեամբ, իբրեւ թէ անոնց միջամտութիւնը մերժելու համար:

— Տէր Աստուած, դուն ողորմէ:

Տղաքը կը պոռային անդիէն:

— Տիւրիւկ, Տիւրիւկ, ձայն մը հասցընել ուզելով ու պատասխան մը ահլընկալելով ծովուն վրայէն:

Բ.

Իր սովորութիւնն էր իրիկուան ճաշէն վերջը շրջադայութիւն մը ընել ծովուն վրայ. կը սիրէր ծովն, անոր հետ, անոր քովը մեծցեր էր Տիւրիւկ իրենց տանը մէջ. հարս երթալէն վերջն երկու տարի միայն հեռու ապրէր էր անկէ, Բերայի աղմուկին ու փոշիին մէջ բանտարկուած, զգուած անոր աղտոտ մթնոլորտէն, իր ծովեզերեայ տանը կարօտը քաշելով, և միշտ փնտուելով անոր աղտոտ ու լայնատարած հորիզոնն և կապուտակ ալիքները:

Երկու տարուան հարս էր երբ որ, այրի մնացած, պարտաւորեցաւ հօր տունը դառնալ, չկրնալով համաձայնիլ իր կեսրոջը հետ, որ չէր ներեր իրեն ողջ մնալը զաւկին մեռնելէն վերջ:

Այս վերադարձէն շատեր նոր ամուսնութիւն մը գուշակեր էին:

— Կ'ըսէ է, կ'ըսէին կիներ:

— Աղուոր է, կ'ըսէին էրիկ մարդիկ:

Գեղեցիկ ու երիտասարդ էր. բայց վէս ու առնական դեղեցկութիւն մը, որ գիմացինը կը շփոթէր ու յառաջանալէ կ'արգիլէր:

իր սեւ աչքերը թափուէն կայծակներով լեցուն կը թռչէին, և ոչ ոք կը համարձակէր անոնց խորը նայել:

Հպարտ ու առանձին կը մնար իր երիտասարդ այրիի սուգին մէջ քաշուած, գլուխ չդարձնելով երբեք երիտասարդաց չափակրատ ու սեթեւեթեալ խօսքերուն:

Չորս տարիէ ի վեր զր հօրը տունն էր, սուգէ չէր ելած, գեռ ու բամբասող կիները՝ նախանձարեկ անոր սողած բացառիկ հրապուրէն՝ կ'ըսէին իրարու:

— Սեւերը կը վայլէ անոր համար չը հաներ:

Արդարեւ կը վայլէր իրեն սեւը. ճերմակ մորթին փափկութիւնը կը շեշտէր. իր առատ մազերուն սեւաթոյր փայլին կը յարմարէր. բարձր ու փայլունչ հասակին բոլոր առաւելութիւնը կը ձգէր:

Ազդիկները չէին քաշեր զինքն. անոր շուրջը դարձող արանց բազմութիւնը կը յառահառտեցնէր զիրենք. այս երիտասարդ կիներ իրենց իրաւունքներն ու յոյսերը կ'ոչնչացնէր. կը բողբէին:

— Թո՛ղ կարգուի ու ասանկ բոլոր էրիկ մարդիկը գլուխը չծալվէ:

Եւ սակայն Տիւրիւկ ձեռքէն եկածը կ'ընէր զանոնք հեռացնելու համար: Բարձր ու գոռոզ սարի մը պէս անմատչելի կը կենար իր գեղոյն ու սուգին մէջ:

Գ.

Ժամ մը առաջ իր սովորական պտոյտին ելած էր ծովուն վրայ. Սահակը մակոյկը բերած էր ու իր հանըմը կը ստրուցնէր ծովուն կապոյտ ու անջինջ երեսին վրայ. Պէ՛օյիւքաէրէցի տղայ մը որուն յաղթ կազմուածքը կատարեալ երիտասարդի մը երեւոյթը կուտար իրեն: Իւր հայրն այս տանը մէջ քսան տարի իրր նաւավար աշխատած էր, ու ինքն ալ տարի ու կէս է ի վեր, հօրը տեղ կ'աշխատէր հիմա. զաւկի մը պէս կը սիրէին զինքը. պղտիկուց ի վեր կէս մը այս տան մէջ մեծցած էր. կը յիշէր, հիմա թիափաբեկով իր հանրմին դէմը, կը յիշէր իրենց տղայութիւնը, հանրմին հետ միասին վարպետ սուսուռի զնայած ըլլալին, շատ աղէկ միտքն էր մտալածառին քովի տունը ուրկէ ինքը ցորեկէն վերջ կը փախէր միշտ ծովեզերքը, յոյն ընկերներու հետ ֆուտբոլի խաղալու համար:

Դառնութեամբ, ցաւելով, ինքզինքը յանդիմանելով կ'ըսէր թէ մարդ եղած չէր ինք, ու այսպէս նաւավար մնացած էր հօրը պէս:

Կը խօսէր, մինչդեռ ալիքները մեղմիկ կը փայփայէին նաւակին կողերը, ու կը հեռանային եզերքէն հոսանքին մէջ:

Օգը իրիկուան զովութեան տեղ ընդհատուակը տաք ու հեղձուցիչ կը գառնար:

Տիւրիւկ չէր պատասխաներ նաւավարին պատմած մանկութեան յիշատակներուն, բայց ինքն ալ կը յիշէր այդ օրերը, ու կ'ունենդրէր առանց ընդմիջելու. ինքն ուրիշ խորհուրդներու մէջ մտաշրջիկ, ահանարկն երկնքի եզերտից մէջ թափառիկ, չէր տեսներ իր դէմը թիափառող տղան որ իրենց մանկութեան մօտութիւնը յիշեցնելով կարծես հիմակուան հեռաւորութեան դէմ լռելեայն դանդաղ մը կ'ուզէր:

Դ.

Ծովը կապոյտ ստանի մը պէս առանց ծալքի կը տարածուէր կը մնար ու տաք զեփիւռ մը՝ անհասանելի հրդեհի մը ջրհուրցած մթնոլորտին պէս՝ երեսի կը զարնէր. հեռուէն Պէ՛օյիւքաէրէցի ծովեզերքը մթնշաղին մէջ նոր փառուող ճրագներն ու լապտերները լուսաւոր բիծերու կը նմանէին:

Սուլթանիէի բացերն էին հիմա. ոչ նաւավարը, և ոչ Տիւրուհին ուշադրութիւն կ'ընէին քիչ քիչ երկինքը ծածկող մթին ամպերուն որոնց խայտաբայտ փայլը ծովուն անշարժութեան մէջ կը ցոլանար. սովորականէն շատ հեռու գացած էին արդէն ու կը հեռանային դեռ ալեաց կամակ ընթացքին հետ:

Հաւասարապէս բացն էին երկու եզերքէն և ծովուն վրայ մօայլ քող մը կ'իջնէր, հեղձեալ մշուշ վարագոյրի մը մէջ ամփոփելով զիրենք. երիտասարդ կիներ իր նաւավարէն զատ մէկը չէր տեսներ ալ ու ստիպեալ կը դիտէր հիմա անոր առոյգ ու հուժկու իրանն որ ամէն կռնակի վրայ ծուլուռ, թափանցիկ պէշաւէկ շապիկէն ցոյց կուտար թուրուքի մը ելեւէջն և շաղկիկն լայն թեզանեաց մէջէն մկանուտ թեւերը:

Տիւրիւկ իր նաւավարը կը դիտէր այս ծովին ու օգին ջրամութեանը մէջ, այս կէս լոյս ու կէս խաւարին մէջ, այս եղանակն միայնու թեան ու առանձնութեան մէջ. դեռ պատանի մ'էր, վերին շրթունքը հազիւ թէ մրոտած, նուրբ ազուամազ մը դեռ նոր կ'սկսէր անոր արեւակէզ այտերուն վրայ. մերկ ոտքերն յենարանին դրած էր անձած կոյթ ազդերքը ցոյց տալով. թարմ, կորովի ու անձանակ բան մը կար այս տղուն վրայ որ երիտասարդ կիներ կը խռովէր:

— Բանի՞ տարու ես, Սահակ:

— Ի՞նչ գիտնամ, հանրմ, տասներեթը, պէ՛տէ տասներեթը կամ:

Ու մանկամարդ կ'ընէր ահամայ կը բաղդատէր այս տղուն տարիքն իր քսաներ-

կու տարիներուն հետ և բոլորովին յարմար կը գտնէր իրարու :

— Նայինք քեզ ե՞րբ պիտի նշանենք :

Մօր մը ձեռերը կ'առնէր, աւելի ազատութեամբ խօսելու համար, և վերջապէս ծովուն այս առանձնութեանը մէջ իր համարձակութիւնը կ'աւելնար. հաճոյք, գաղտնի ու անբացատրելի բան մը կ'զգար խօսելով այս նշանաւորին վրայ, անոր նշանածին, գրեթէ կնոջը վրայ. Սահակին կինը Պէօյիւքաթէյի աղջիկ մը պիտի ըլլար, երջանիկ կին մը այս հուսկութեանը մէջ որոնց վրայ կ'զմայէր :

Ու այս խօսքերով, պատանիին շփոթութիւնն ու կարմրութիւնը կը վայելէր. թերաւ քոյ հարցումներով կը ջանար անոր անսիրտ պարզամտութիւնը հասկնալ, ու որքան աւելի շփոթ ու խռովեալ տեսնէր նաւաւարն, իր բացատրութիւններն աւելի դիւրահասկանալի, բառերն աւելի բացայայտ կը դառնային, տեսնելով որ վախ չկար այս աղուն հասկացողութենէն որուն զգայնութիւնը ժայռի մը պէս ամուր ու հանգարտ կ'երեւէր :

Եւ նորաւոր կինն աւելի կը յառաջանար արպտելով այս պատանի սիրտն ու հետաքրքիր բժշկի մը պէս փնտռելով զայն թունդ հանելիք ջիլը :

Նաւաւարը չէր պատասխաներ, ձիւնաթոյր ու մեծածաւալ վարտիքին անհամար ծալքերով ու փոթերովը լեցնելով իր նստարանը, հեռուն՝ եղբայրներուն նայելով միշտ զոր չէր տեսներ մշուշին մէջ ու ակնարկը փակցնելով իր տիրուհւոյն հետախոյզ ու խրոխտ աչքերէն :

Կը հասկնար թէ չէր հասկնար այս լեզուն :

Ե

Յանկարծ ծառոց խորշափիւնի պէս խշրտաւք մը ելաւ : Ծովուն վրայ տեղ տեղ փոքրիկ պղպձակներ կազմուեցան, ծովուն երեսը մութ երանգներով զատուեցաւ. հեռուէն միւսած զօրաւոր շունչ մը փարատեց այս մշուշ սրսկապանն որ տիրուհին ու ծառան կը շրջապատէր. Ուշա-տէտէն բարձունքին վրայ երկինքը փայլատակեց, գեղին ու շլացուցիչ լոյսով մը ողպելով ծովն ու ցամաքը, և ամպրոպայոյզ որոտում մը սաստկութեամբ ճայթեցաւ :

— Հանրա՛ պա՛ս կայ, փախինք, փախինք :

Ծովուն մակարդակը գոգ կ'առնէր, կ'ուռէր, երկար ու անծայր կոհակ մը ձեւացնելով :

Եւ դարձան, նաւաւարը փութացնելով իր թիւփարութիւնը երկնից մթութեան ու ծովուն սպառնալեաց առջեւ զորս քանկ կը ճանչնար :

Հիմա կը շարժէին, կը տատանէին դեռ չփեռեկառուող այն կոհակին վրայ, բարձրանալով ու խոնարհելով անոր կամքին հետ :

Հարաւին հողմը կուգար կը հասնէր ուժգին, — հալածական ու հալածող հովմը իր բոլոր սաստկութեան մէջ :

Նաւակը Պէյքօղլի բացերուն կը մօտենար, ու ծովն իր կոհակածեւ երբման մէջ չկրնալով դիմադրել փոթորկին շունչին, հազարաւոր ալիքներով կը պատուրէր, կը ձեղքուէր, սպիտակ փրփուրէնք ու մէջ :

Սահակ իր բոլոր ոյժը կուտար, ջիլերուն բոլոր տոկունութեամբ, մարմնայն բոլոր առուգութեամբ կուռնելով :

Իւրաքանչիւ մակոյկը ալեայ վրայ կ'ուստատէր եւ փոթորիկը կոհակէն կը մղէր զայն անընդհատ շունչով մը որ երիտասարդ կնոջ ուսը ու մէջքը կ'ընդգրկէր, և մազերն՝ իրենց գեղեցիկ ու ամփոփ շտակուածքը կորսնցուցած՝ հողմածուփ կը շարժէին :

Հիմա գիշերը կը շրջապատէր զիրենք, ահարկու երաժշտութեամբ մը տօնելով իրենց միայնութիւնը, ու ծովուն մէջ խեղդամահ կորսուելու վտանգովը անոնց միութեան հարկը շեշտելով :

Փոքրիկ մակոյկը ջուր կ'առնէր ալ. այրին թողած էր դեկին մետաքսահիւս չուանները և փոթորիկը միայն կը վարէր ու կ'ուղղէր զիրենք. հանրմը չէր խօսեր բայց կը տեսնէր մահն. այս հեղուկ դաշտին մէջ խղդուելը՝ մօտ, շատ մօտ, իր քովիկը, եւ կը վախնար :

Իր տփփոյն գէմքն այսերուն կարմրութիւնը կորսնցուցած, աւելի հրապուրիչ էր, մինչդեռ հողմն իր անգաղտնապահ ու որոնող շունչովն անոր շրջազգեստը կը խառնէր շարունակ, հեշտալի առագաստի մը պէս լեցնելով զայն :

Անկարող էր ուշադրութիւն ընելու հիմա իր գլեհատից խառնակութեանն որ նաւաւարին ցոյց կուտար իր սրունքն ամբողջ մինչեւ ծունդերը, զորս սեւ Ֆէլ-«է+»-է գուլպան իր պարոյթովը կ'ընդգրկէր մինչեւ ծնրակապն ու անկէ անդին, և որուն վրայ նուրբ ու ձիւնասպիտակ փուշէ ձերմակեղէններուն դրասանդները կը խաղային իրեն տեսակ մը փրփուր զոր շրջապատն իր գաղտնածածուկ ու երանաւէտ փոթերուն մէջ պահած ըլլար :

9

Մերթիկն իր բոլոր զայրոյթին ու կատաղութեանը հասած էր ալ. ծովը հետեղհետէ լեռնածեւ ալիքներով չորս կողմէն կը պաշարէր փոքրիկ մակոյկը զոր իր աղի ջուրերովը լեցուցած էր :

Մութին մէջ աներեւոյթ դարձող ցամաքն՝ իրարու յաջորդող փայլակներուն ցոլացման մէջ կը տեսնուէր հանդարտ ու անըրոյթ. տուներն ու ապարանքներն իրենց կարմիր ու գոլարթ լոյսերը վառած էին և ալեաց մէջ կորսուող մակոյկն, անիրականէի երազի մը պէս հեռուէն կը գիտէր ցամաքին այս հաստատ ու ապահով երջանկութիւնը:

Սահակ կը շարունակէր իր գերմարդկային ճիգերը, փտանգը կը կրկնապատկէր անոր ճարտարութիւնը. բոլոր ջանքը կը կայանար նաւակին կողմը չընծալելու ալեաց յարձակման, ու խաւարին մէջ ճերմակ փրփուրներէն կոհակաց գալուստը տեսնելով՝ ձախ թիակովն իր ուղղութիւնը կը պահէր. խոյս տալու. մէջ չէր փրկութիւն, այլ անխոհեմ դիրքով մը չընդդիմանալու փոթորկին զայրոյթին. և այսպէս հալածական ու հնազանդ կը մղուէին ալեաց կատարներուն ու խորութեանց մէջ:

Երիտասարդ կինը նաւակին մէջ սարսափէն նուաղած, ընկողմանեալ կը մնար. իր արդուգարդին գրգռիչ ու շնորհալի անկարգութեանը մէջ:

Ոճաբ եւէլի ծոցը կը մանէր մակոյկը հիմա. այս սեղմուած եղերքներուն մէջ ծովն աւելի կը բարձրանար, կ'ուռէր սպառնալից ու մահազոյժ կը դառնար. նաւավարը կ'զգար կորուստն անխոսափելի. ալիքները կիսովին թրջած էին գինքն ու իր տիրուհին. աղի համ մը, այդ ջուրերէն ելող դառնութիւն մը կը լեցնէր իր չնչստպառ կուրծքը, խեղդամահ կորսուելուն սկզբնաւորութեանը պէս այս ջուրէ գերեզմանին մէջ:

Իր ուղղութիւնը պահելու ստիպուած՝ ալեաց կը նայէր դեռ ու միջոց մը փայլակին լուսովը տեսաւ նաւակը մօտեցած եղերքին զոր փրփուրներուն ոպիտակութիւնը՝ ձիւնապատ գաջտի մը նման բոլոր երկայնութեամբը կը գրաւէր:

Ալ անկարելի էր չփշրուիլ այդ ծովուն ու ցամաքին մաքսամանը մէջ. անկարելի էր դառնալ բացը նետուելու համար. այն ատեն ալտոյակ մը բրդաւ իր կուրծքէն, օգնութիւն՝ կոչելու ձայն մը, աղիողորմ և յուսահատ գոչիւն մը զոր ծովն իրրեւ. թէ անաղնկալ աջակցութիւն մը արգելելու դիտմամբ իր մռնչիւնովը ծածկեց:

Յամաքէն տասը գրկաչափ բացն էին, ծովն օրորոցի մը պէս տուփ ու ետ կը մղէր զիրենք և իր խուլ նուազներովը քնացնել կ'ուզէր այս դատապարտեալները:

Այս մահուան տարուբերին մէջ ալիք մը անհնարին մոլեգնութեամբ գրկեց

բարձրացուց մակոյկն իր լոյծ կուրծքին վրայ. մաներկորող մը վարանեցաւ կարծես սրոշում տալու համար, յետոյ անհաւատալի զօրութեամբ ցամաք նետեց զայն, հոն հաւաքուած աւազներուն վրայ, ու ետ քաշուեցաւ:

Այս ալիքն որ իր անօրինակ ուժգնութեամբը սոոյգ կորուստ մը պարտէր բերել, իրենց փրկութիւնն եղաւ. չափազանց սաստկութիւնը խորտակելու տեղ ազատեց զիրենք և իր նպատակին ներհակ արգիւնք մը արտադրեց. այս պարագային մէջ ծովուն վարմունքը մարգոց վարմունքին համաձայն փոխուեցաւ:

Նաւավարը դուրս նետուեցաւ ու ամէն բանէ առաջ իր պրկուած ու ուժաթափ մատներովն ալ աւելի դէպի ցամաք քաշեց թեթեւ մակոյկն ու յետոյ տիրուհին դուրս հանել ջանաց:

Մութեան մէջ կ'որոշէր անոր վախէն թալկացած դէմքն ու մարմնոյն բոլոր զմայլելի գծադրութիւնը զոր թերջուած չընդգեղար բոլորովին յայտնի կ'ընէր:

Այն ատեն բռնեց այդ լեցուն ու հրաշագեղ մարմինն, իր գրկին մէջ իր ուսերուն վրայ առաւ, առանց թեւերուն մէջ կարենալ ամփոփելու այդ հարուստ իրանը, առայգ բարձունքը. մանկամարդ կինն այս հպումով, այս ջերմութեամբ սթափեցաւ. չզարմացաւ սակայն ինքզինքն այս բազկաց մէջ տեսնելով. կիսովին փարատուող նուաղմանը մէջ, երազի մը, երջանիկ ու փափագուած երազի մը տպաւորութիւնն ունեցաւ. իբրեւ թէ Պէօյլեքտէրէի իրենց ապարանքին մէջ իր քաղցրաբոյր ննջասենեակին անուրջներովը ու երիտասարդ կնոջ իղձերով խռովուած ու բորբոքուած ըլլար այս վայրկինիս, ուզեց որ այդ երազը չուտով չը վերջանայ, ու երկարի:

Ու այս պատրանաց անձնատուր, հոգուն դալարեաց վրայ ուր գրկելով տարած էր գինքն իր նաւավարը, նսեմատուներ ու խոնաւ երկնքին տակ, փոթորկին յօրինած տարօրինակ ու տխրանեան եզանակներովն, ամպրոպին ահարկու ձայներուն մէջ, չզարթնուլ ձեւացուց, անաղապաս թողլով վարդագոյն դարձող այտերն ու նուազելու պատրաստ քնարի մը պէս բոլորովին դողդոջուն այս մարմինը, մինչեւ որ, այս երազն որ այնքան կը նմանէր իրականութեան, շարունակուէր ու ամբողջանար:

Ե

Քարափին վրայ ուր նորատի կինն ոտք կոխեց, արցունքներ, համրոյրներ ու տղօթքներ իրարու խառնուեցան:

—Ազատեցա՛ր ազատեցա՛ր:

—Եկու զգեստներդ փոխէ՛, խոսում ես, Տիւրիւկ:

Ուրախութեան վերջը հարցումներ հազարներով. ո՛ւր բռնուեցաք, ի՞նչպէս փախաք, ո՞ր կողմն ելաք. ոյս ցնծութեան ու ուրախութեան մէջ նաւաւարը մոռցուած կը մնար իր մակոյկին մէջ. վերջապէս անոր ալ կարգն եկաւ. Տիւրիւկ իր ազատարարը ցոյց տուաւ:

—Ես ինքզինքս կորուսած էի բոլորովին, բան մը չեմ յիշեր. Սահակին հարցուցէք:

Ենթահակաւորութիւնները, գովեստները չզլացան. Տիւրիւկի հայրն ոսկի մը պարգեւ տուաւ:

—Աս տան գլուտին ես, բռին ամէնքը միարեան:

Անկէ վերջը բնական էր որ նաւաւարն աւելի անձնուէր ըլլար իր հանրմին որ երիցս իրեն տիրուհին էր:

Բ

Յետոյ փոթորիկն յիշատակը միայն մնաց. Տիկինը մէկ մըն ալ իրիկունները չելաւ ծովուն վրայ շրջագայելու. ի զուր նաւաւարը ամէն ապահովութիւն տուաւ իրեն. հեռուն չալտի երթային, ոչ, ծովեզերքը միայն. մակոյկը դիմացկուն ու փտահելի էր: Հանրմը իր որոշման վրայ հաստատ մնաց: Այն գիշերուէն ի վեր իր նաւաւարին երեսը տեսնել չէր ուզեր կարծես. կ'զգուշանար անոր հանդիպելէ և երբ պարտաւորէր խօսք մը ուղղել իրեն, ցամաք ու հրամայական չեղտ մը ունէր միշտ:

Զայրոյթ մը կար հիմա իր սրտին մէջ անձնատուր ըլլալուն համար այս պատանի ապաստարին. այդ վայրկեանն որուն ախտաբորբոք անհամբերութեամբ մը ըսպատած էր ատեն մը. ամօթ ու արատ մը կը թուէր այժմ իր յագեցեալ սրտին: Իրեն հաւասարներէն շատերու արհամարհած էր աղերսներն ու կը զարմանար այս աւամիկ աղուն յաջողութեան համար:

Փոթորիկն իր գլխուն վրայ և իր հոգւոյն մէջ գոռացեր ու անցեր էր. ու մոռնալ կ'ուզէր ալ այդ վրդովեալ գիշերը, մինչդեռ նաւաւարն ընդհակառակն յիշէր ու յիշեցնէր կը ջանար այդ երանաւէտ ու արհաւիրաց վայրկեանները. իր տիրուհւոյն շուրջը կը դառնար շարուն-

ակ, կենդանի յանդիմանութեան մը պէս անտանելի դառնալով: Զէր կրնար երբեք պատմել իր երջանկութիւնն ու բաղդը, չէր համարձակեր իր տիրուհւոյն խօսիլ անոր նուազման միջոցին պատահածներուն վրայ. և իր սրտին ու մտքին մէջ ամփոփուած այդ երջանիկ նուազումը՝ իրականութենէ աւելի, երազի մը նման պարզապէս երեւակայական բան մը կ'ըլլար, բայց ոչ առանց խորապէս վրդովելու իր նոր արթնցնող երիտասարդի հոգին:

Վայրկեաններ կուգար ուր ժամերով լռիկ նստելէ վերջն իր խոհանոցի քովի փոքրիկ խուցին մէջ, ու աչքերովը պատկերացնէր վերջն իր անհաւատալի երազին բոլոր մանրամասնութիւններն, անդիմադրելի բան մը կը մղէր գինքն իր հանրմին երեսն ի վեր ըսելու իր սիրատուէր իղծերն ու տառապանքը. վերջապէս այդ ձիւնաթոյր ու ջերմիկ մարմինն ինքն էր փրկած ծովուն անդունդներէն և իրենը պէտք էր լինել ամեն բանէ տառջ:

Լռին, առանձնակեաց ու վայրենի կը դառնար հետզհետէ, գործ չի կար տանը մէջ իրեն համար. մակոյկը չէին նստեր, եւ աւելի իրեն վարձք մը տալու համար վար դրած էին զինքը քան թէ իրական ծառայութեան մը ակնկալութեամբ. կ'ըզգար զայս ու կը արտմէր. այս ողորմութիւնը ծանր կուգար իր սրտին. շատոնց պիտի խոյս տար այս առնելն եթէ իր հանրմին տեսքէն կարօտ մնալը դժնշակ ու մահացու զրկում մը չի թուէր իրեն: — Իրաւ է որ անվտանգ ազատեր էին փոթորիկէն, բայց մահուան այսքան մօտ գեղերիլը պակասութեան մը արգելանք համարուած էր տանը մէջ ու նաւաւարն աչքէ ինկած կ'զգար ինքզինքը. յանցաւորի մը պէս զայն մեղքնալիւն համար միայն չէին պատժեր. անշուշտ ու անտեսանելի մնալու կը ջանար ալ. երբեք մտքէն չանցաւ որ սպերախտութիւն մ'էր տնեցոյ զինքն այսպէս լքանելն. հիմա անօգուտ, բայց ատենօք անձնուէր եզրոյ շան մը պէս չէին վռնտեր զինքը, բայց չէին ալ ուզեր:

Այս ցաւը՝ փոթորիկն սարսափին եւ անոր պարգեւած երանութեան ու անհամար իղծերուն յաջորդելով՝ խանգարեց իր տկար իմացականութիւնը:

—Արան Դերա եկաւ, կ'ըսէին զինքը մեղքնալով, մինչդեռ երկուստարդ այրին իր անտարբեր ու խուսափող վարմունքը կ'աւելցնէր. խօսքը եղած ատեն, այդ վիճակին ծանրացումէն վախ կը յայտնէր միշտ. միւսներուն՝ չափազանց կը թուէր այդ յուետեսութիւնը. իր վախին վրայ կատակ կ'ընէին, կը զուարճանային.

—Չ'ելլայ յանկարծ ճիտդ փաթթուի.

—Մ'ըսէք, դու կ'ելլամ:

կը խնդային.

Դէպքերն իր վախին արդարացի ըլլալը հաստատեցին. նաւավարին մտային վիճակը հետզհետէ ծանրացաւ. ինչպէս հիմունքը խախտած շէնքի մը մէջ դանազան մասերն իրարու վրայ կը զետեղուին խառն ի խառն, միևնոյն բանը կը պատահէր դաւարարներուն ու զգացումներուն մէջ զորս ի հիմանց դիւրեւրէին. առթիւրը կանչեցին, քառորդի մը չափ խօսեցաւ հետը զանազան նիւթերու վրայ. բայց միշտ փոթորիկն վրայ էին նաւավարին տուած պատասխանները. բծիչկը խեղագորութիւնը հաստատեց և առանց վարանելու պատճառը ցոյց տուաւ. փոթորիկն գիւշերն երկիւղէն խանգարում մը յառաջ եկած էր խեղճ տղուն մտքին մէջ.

—Բայց վախնալիք բան մը չիկայ, կ'աւելցնէ բծիչը, աւելի տղչութեան մէկ տեսակն է:

—Ձե՛ չէ, առթիւր, տան մէջ վտանգաւոր է, այնպէս չէ՞, կը պնդէր այրին:

Վերջապէս ճամբու դրին, մօրը տունը զրկեցին տղուչը. կեանքը ազատած էր, բայց իր հոգին արդէն կորուսած էր փոթորիկին մէջ:

Գ. ԶՈՂՐԱՊ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ

Պանդուխտ մածնավաճառը. — 60 փարայի կուր. — Սննդի:

Չա՛թ, Չա՛թ: Ո՞վ է Արմենակ. — Հայրենիքի մարդն, հօրեղբայրս:

Իմ երգիչն էր, քաղցրիկ սփովանքս և ցաւոց պատկեր մը երեւակայութեանս առջեւ կախուած: Տարւոյն երեք եղանակաց մէջ, ամեն երեկոյ կը լսէինք. Բայ-ժաւը Եւգէնի, և երգին ձայնն իրմէ առաջ կը վազէր դուռներու առջեւ. կ'երգէր, չա՛տ կ'երգէր և շատ բան. երգ ու եղանակ կը փոխէր, իր հոգեկան տրամադրութեանց համեմատ. տխուր օրուան համար՝ տխուր երգ ու լալիտն եղանակ ունէր. զուարթ օրուան համար՝ զուարթ երգն ու եղանակն:

Գետտի՛ սառի եմ կըտոր,

Մօրքս աղջիկն եմ աղւոր.

Սիրականիս զոյգ աչեր,

Գըլխուն լուսին եմ գիշեր.

Ասոնք կ'ըսէր աղջկայ մը բերնէն. և իբրեւ պատասխան մը տարփածու երիտասարդին կողմանէ՝ հետեւեալ կցուրդը (նախարար) կը մոմնջէր.

Սիրուն աղջիկ, ջան աղջիկ,

Ձիս մեռուցիր, ալ հերիք.

Աչք շարժեցիր և ընքուր,

Գերի ըրեր զիս քեզի:

Այսպէս ահա երգով վիպակներ կը թափէր ամէն երեկոյ մեր դուռներու առջեւ, շատ անգամ մոռնալով իր առուտուրը: Մեր մածնավաճառն էի այս մարդը, մէկ ոտքէն կազ պանդուխտ հայ մը, որ մեր թաղի մէջ, հոս ու հոն, իրեն յաճախորդներ գտած էր երգելով:

Հերուն ցրտագին ամիս մը չ'երեւցաւ այս մարդը. հարցնելով գտած էր իր բոյնըն, և կիւրակէ առաւօտ մը հոն ցցուեցայ: Փոքրիկ խցիկ մըն էր. պարսնաւոյ մը գլխուն վերեւ նստած էր նա, իր դաւակն էր հիւանդն, որուն անկողնին քով տքնած էր ամսով չափ իրրեւ գլխաւայր, և ո՛չ մէկ օր ալ տաւետուրի ելած: Պանդուխտութիւնն հոն էր, երեսը քաշուած և սառուցի չափ պաղ, աչքերն առկայծ

և մահաշնորհ, անսխառնապար գրեթէ, և քսակը դատարկ, Սպրի սակայն Սիլեւտարու Աղքատասէր Ընկերութիւնն, որ նըշմարած էր, խօ՛ւ մթութեան ետեւ, այդ հէք մարդուն խցիկը, և Տոքթ. Թորգոմեան ալ Աստուծոյ հետ այցելած էին այդ հիւանդ տղէկը: Ի՛նչ մեծ պատիժ պիտի ըլլար մեզ այն օրն երբ այդ ոտքով կոտորտած մարդն, աչքերն արցունքոտ և սիրտն ի սպառ կոտորտած, իր զաւկին դադաղին ետեւէն քաշուելով քշուելով երթար տխրագին: Բայց գոհութիւն. մածուն ծախողին տղեկն ոտքի ելաւ, հայրը գործի սկսաւ և ալ կը լսէինք իր ձայնը. «Բայտը եւէ՛ղ-բայտ» Ժամանակ մը երգ ու եզանակ, երկուքն ալ մեռան իր շրթունքներուն վրայ. և առաջին տեսութեանս՝ երբ հարցունցի թէ ի՛նչպէս է տղեկը. «Օ՛. հայրենիքն է հիմա», ըսաւ, անկէ թուղթ առած էր և առողջութեանը մասին ալ բարեգուշակ լուրեր: Պանդուխտներու հիւանդութեան լաւագոյն տեղն է իրենց հայրենիքն, և թերեւս միակ տեղը. ապահով եմ որ անոնց մեռելներուն թիւը կէս առ կէս կը նուազէր եթէ հիւանդանոց զրկելու տեղ՝ կարող ըլլայինք իրենց առենիւրը զրկել. զի այդ մարդոց հիւանդներն, եթէ քիչ մը առողջացած ալ դառնան մեր հիւանդանոցէն, հաւանական չէ որ գլուխ ելնեն. ի՞նչով պիտի գտնեն իրենց նախկին զօրութիւնը, ի՞նչով պիտի կարենան նորոգել իրենց քամուած ծծուած արիւնը, քանի որ ամիսներով պիտի նըստին սրճարանի հեղձուցիկ օդին մէջ, պիտի պառկին իրենց խեղդուկ խանութու տակ, փաթթուած պլորուած չքաւորութեան մէջ: Ասոնց վրայ պէտք է աւելցնել իրենց հոգեկան այս վիճակն ալ: Հիւանդութեան ժամերու մէջ կարօտոյ զգացմունք աւելի արթուն և սուր են, ո՛չ մէկ վայրկեան զինքն հոս չես գտներ, իր տխուր ծանով սիրականներուն հետ է, պատրանքներու, և տալա ոտչորոզ տառապանքներու մէջ: Ուստի շա՛տ լաւ ըրած էր մեր այդ խեղճուկ մարդը՝ զըրկելով զաւակն իր տունը, մօրն ու եղբարց քով, և Տոք. Թորգոմեան լաւագոյն բժշկութիւնն ի գործ դրած էր յորդորելով որ հիւանդ տղեկը, քիչ մը աղէկնայ թէ չէ, իր գաւառն երթայ. ո՛վ գիտէ, եթէ հոս մնար, գուցէ այժմ Սիլեւտարու գերեզմանոցին մէկ անկիւնը նետած կ'ըլլայինք: Նախորդ տարին այդպէս անցաւ:

Այս տարի ալ ամիս մը չերեւցաւ այդ մարդը, բո՛ւն մածունի ամիսը, և բարեգուշակ չէր այս: Խեղճն արդէն խիկ մէկ կանոնաւոր ոտք ունէր, և ա՛ն ալ կոտորած էր փողոցին մէջ գլորած տառն, և այս պատճառաւ, երեսուն օր ծալուած ծրարուած մնացեր էր խցիկն մէջ, ինքն ու իր Աստուածը: Գուրս ելած օրը տեսայ. նիհար և տժգոյն էր. կաթնամանը ձեռքն՝ իր բարեգութ յաճախորդաց կաթ կը տանէր. քալել չէր, այլ պարզապէս տառապանայ տառապանք, որուն դատապարտուած մէկ հիւանդ և մէկ կապ ոտքերով, իրա՛ւ հոգին բերանն առած կը պտտէր: Եւ մինչ ես կը փորձուէի ըսել թէ, ո՛վ Աստուած, ա՛յ ի՛նչ կեանք է զոր տուեր ես այս մարդուն, ինքը կանխեց քան զիս և ըսաւ թէ «Իրդար պատիժս է որ կը քաշեմ. ուխտ ըրել էի որ այս տարի հայրենիք երթամ, հաշիւներս փափաքիս և ուխտիս չպատասխանեցին, միտքս ծռեցի և աս փորձանքն եկաւ գլխիս. զաւկներուս առաջինն է: Հիւանդութեանս առեւնն ուխտս նորոգեցի. փառք Աստուծոյ, ալ լաւ եմ, պիտի երթամ», և իրաւ էլ գնաց: Երեք տարի հոս պանդխտած էր այդ կոտորտած մարդն, ընդ ամենն 3,000 դահեկան զրկած իր տունն ու զաւկներուն. թէ ի՛նչ ունէր քսակին մէջ, չգիտեմ, միայն թէ ալ հիմա իր տնակին մէջ է, կնոջն ու զաւկներուն քով, մուցած ամեն վիշտ. այս ձմեռ Յակոբը պիտի կարգէ, Կարապետն ալ կը նշանէ, և աշունը դարձեալ հոս: Գաւառացի հայուն մէկ անհամեմատ առաւելութիւնն է այս, պահել սերնդեան մը շտըմնաւորութիւնը, և այս պատճառաւ ցորչափ կենդանի է, աշխարհի ամեն կողմ կը թռչի անտրառունջ, և մահուանէ ետքն ալ զաւկներ կը թողու. կա՛յ մած նախաճառն երկու սիրուն զաւկներ կը պահէ Սպրիին համար, թէ և իր ազգակիցները հոս քիչ անգամ իր մածունը կը գնէին. կ'անցնէր մեր տուններու առջեւէն և իր աչօքը կը տեսնէր որ հայ տիկինը կամ հայ մարդն իրենց մածուն ծախողներուն հետ սակարկութիւն կ'ընէին խնդալով, կ'անցնէր անխռով և անտրառունջ, և պնտկները լեցուն կը դառնար «Բայտը եւէ՛ղ-բայտ» գոչելով:

Մեք շատ անտարբեր ենք մեր ազգակիցներու մասին, կ'ինն, այրն ու աղջիկն, ամենքն ալ անտարբերութեան զգացումի մէջ սպաննուած են գթութիւն և մարդասիրութիւն. (մարդասիրութեան առա-

ջին սանդղամատին վրայ մարդուն ազգակիցն է կեցած)՝ աշխարհքէ դուրս ենք մեք։ Յուլիսի 14րդ օրն Ազգ. Արհեստանոցէն կը դառնայի, Բերայի Մեծ-Փողոցին մէջ պահ մը դադարեցաւ կառաց երթեւեկը։ Հեռուէն բաղմութիւն մը նըշմարելի էր, մօտաւոր խանութներուն մէջ գլխարկաւոր չէր մնացած, ամենքն ալ դուրս թափեր էին։ Հասայ, երկու համալ մէջտեղը շրջապատուած էին. յոյն մը յոյն խանութէ մը բեռ առած էր, համալներն ալ պահանջած էին թէ իրենցն է այդ իրաւունք, և այդ պատճառաւ տարեկան 180) դահեկան տուրք կը վճարեն. անօգուտ. այդչափ գլխարկ հոն թափուած էին 60 ֆարս, լեցե՛ք, 60 ֆարս չը տալու մեր համալներուն։ Զարնել ալ եղած էր վերէն ու վարէն. և երբ ես հասայ, զայրոյթը տակաւին մարած չէր գլխարկներու վրայ, դեղին մօրուք եւրոպացի մը, — հաւանաբար անգլիացի, — մէկ կողմ կեցած կը դիտէր կարեկից աչօք մեր համալն, որ դեղնած մայթին վրայ, ձայն չէր տար, և պէխերն ոլորելով սկսաւ քրտինքն ու արիւնը սրբել։ Կերեւէր թէ այսչափը բաւական եղած չէր. Սոկրատի կնոջ մէկ քոյրն աղտոտ ջուր թափեց վերէն մեր համալին վրայ և սպիտակ դատտակն ալ երկար դուրսը թողուց։ Ալ անցայ գնացի. և այդ յիշատակն անքուն կը տեսնեմ յիս ցորչափ դէպի վեր գնացած ատեն՝ պատի մը վրայ կը կարգամ խոշոր տաւերով Dimitriacopoulos, Զմուռնամ ըսել որ տեսարանն հագիւ թէ աւարտած, երեք նորատի հայ աղջիկներ, չնքով շնորքով հագուած, որ հանդիսատես գտնուած էին, ժպտելով մոտան այն խանութն որ 60 ֆարս խնայած էր մեր համալին և խանութպանին հաճոյք մըն ալ պատճառուելու համար՝ ուրացան պահ մը իրենց մօր լեզուն, ձայն և բառեր փափկացնելով այնչափ՝ որչափ կարելի էր աղջկանց, « չմնաց թափեցին հոն, և անշուշտ իրենց կակուղիկ գլուխներն ալ։

Այս տեսարանը ստէպ կը կրկնուին ի Պօլիս եւ կը դիտուին անտարբեր։ Իրա՛ւ կ'ըսեմ, թէ եւ աշխարհական, կաղօթեմ որ մեր պանդուխտներու առջև Տրապիզոնի ճամբան փակուի, իսպառ փակուի. կեանք չէ՛ այս զոր կը վարեն այս մարդիկ փողոցներու անկիւնը, պանդուխտներու խորշերը, և ընդհանուր արհամարհանաց ծանրութեանը ներքեւ։

Կ'աղօթեմ, ըսի, եւ այս բառը յիշողութեանս մէջ բան մը արթնցունց։ Մեր Օննիկ օր մը իր մտերիմներու գրած էր թէ երբ առտուն կանուխ մեր մանկութեան եկեղեցին մօտէք, և մեր տէրտէրներու ձայնակցիք աղօթից մրմունջներով, խնդրուածներ մատուցէք մեր ընտանի սուրբերուն, աղօթեցէք որ պանդուխտն յաջողութիւն չգտնէ ամեն տեղ, լուսինն անոր խոթող նայի, արեւն անոնց կողը չտաքցնէ, գինի եւ օղի իրենց աղիքները չքրքրեն բնաւ։ Ես տակաւին չկրցի հաշտուիլ այդ գաղափարին, թէ «աղօթեցէք որ պանդուխտը չյաջողի»։ Բայց Օննիկ իրեն համար սրբագործած էր այս նոր աղջե՛ք. իր պանդուխտութեան շրջանի մէջ անտարբեր գտնուեցաւ յաջողութեան, այնպէս կը նայէր անոր ինչպէս կը նայինք մեք սառուցին, և իր մեկնելէն քանի մը օր առաջ ալ, մինչ լուսնի լուսով ծովեղերը մը կը նստէինք, ըսաւ մեր Շաքարեանի. «Փառք Աստուծոյ, մէկ փարա էլ չունիմ»։ Անյաջողութիւնն իր փրկութիւնն եղաւ. արցունքով ճամբու դրնք զինքը, և այսօր իր տունն է։ Օննիկ գրասէր եւ գրողներու սիրահար սիրտ ունէր։ Երկու շաբաթ առաջ, ընկերակցի մը հետ Դուրշարաթ առաջ, ընկերակցի մը հետ Դուրշարեանի գերեզմանին այցելութեան գացինք. կոթողին վրայ ամեն կողմ, բազմադիմի կապարեայ շրջանակներու մէջ, իզձեր և արցունքներ թափուած են։ Մեր Օննիկը, զարմանօք տեսայ, ծածուկ տեղ մը գտած և իր ստորագրութիւնը գետեղած է հոն այս կաթողին հօծանօք. «Արցունքս ու հառաչանքս պաշտելի յիշատակիդ, ո՛ր Դուրեան»։ Օննիկ 22 տարեկան է, Պոլսոյ մէջ կրթուած չէ և ընդ ամէնը եօթնամիս պանդուխտ մնացած էր։ Այդ խաներուն մէջ այսպիսի տաք սիրտեր ալ կան։

ՀՐԱՆԴ

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԼԵՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ